



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ**

-- նոյեմբերի 2018 թվականի №---Ա
ք. Երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ
ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը 2018 թվականի ապրիլի 16-ի №1-03/436 գրությամբ դիմել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծ Այրում համայնքում գտնվող 06-073-0234-0002 կադաստրային ծածկագրով 86,5 մ² հողակտորի (այսուհետ՝ Գույք) օտարումն իրականացնելու խնդրանքով,

բ) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը 2018 թվականի նոյեմբերի 20-ի №018/1409-18 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ Գույքի օտարման համար ստանալու Հանձնաժողովի համաձայնությունը,

գ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի №1684-Ն որոշման հավելվածում ներառված «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող Գույքը ճանաչվել է բացառիկ՝ գերակա հանրային շահ, իսկ ձեռք բերող՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը,

դ) նշված գործարքի համաձայնեցումը, հանաձայն «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետի, չի խախտում էներգետիկ համակարգի հուսալիությունը, անվտանգությունը և ներքին շուկայի

սպառողների շահերը, չի վնասում ազգային անվտանգությունը և պետական շահերը, ինչպես նաև ձեռքբերողը, որպես էլեկտրաէներգետիկական համակարգում լիցենզավորված գործունեություն իրականացնող անձ՝ ունի անհրաժեշտ փորձ,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության Գույքը «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը օտարելուն:
2. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը.
 - 1) Գույքի օտարումն իրականացնել լիազոր մարմնի կողմից անշարժ գույքի գնահատողի որակավորում ստացած անձի համապատասխան եզրակացության հիման վրա.
 - 2) Գույքի օտարումից հետո՝ տասնօրյա ժամկետում, Հանձնաժողով ներկայացնել գործարքին վերաբերող բոլոր փաստաթղթերի պատճենները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝**

Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ